8

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայա Բլիաձե, Դավիթ Կերեսելիձե,
Մանանա Սեխնիաշվիլի

Աշակերտի գիրք

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության
նախարարության կողմից, 2021 թվականին

Բովանդակություն

1. Հարավային Ամերիկա 5



1. Աշխարհագրական դիրքը 7
2. Կոնկիստադորներ 11
3. Անդյան լեռներ 16
4. Էլ-Նինյո 22
5. Ատակամա՝ ամենաչոր անապատը 25
6. Ամազոնի ավազան 29
7. Հիլեաներ 34
8. Պամպա 38
9. Անտառահատումներ 41
10. Հարավային Ամերիկայի ժողովուրդները և երկրները 46
11. Բրազիլիա 51

Ամփոփիչ համալիր առաջադրանք 55

2. Հյուսիսային Ամերիկա 57

12. Աշխարհագրական դիրքը 59
13. Կոլումբոսը և Վեսպուչին 63
14. Կորդիլիերներ 68
15. Անդրալյասկյան խողովակաշար 73
16. Տորնադոների ծառուղի 77
17. Յուկոն 82
18. Կոլորադոյի Մեծ կանիոն 86
19. Մեծ լճերի շրջան 89
20. Պրերիաներ 92
21. Ելոուսթոուն ազգային պարկ 95
22. Մեգապոլիսներ 100

Ամփոփիչ համալիր առաջադրանք 105

3. Ասիա 7

23. Աշխարհագրական դիրքը 109
24. Ալպ-Հիմալայան ծալքավորություն 114
25. Ցունամի 118
26. Սև ոսկի 121
27. Մուսսոններ 124
28. Բայկալ 129
29. Արալ ծով-լիճ 133
30. Կիսաանապատներ 136
31. Ասիայի բնապահպանական խնդիրները և բնության պահպանությունը 140
32. Ժողովրդագրական քաղաքականությունը 145
33. Ասիայի երկրները 151
Ամփոփիչ համալիր առաջադրանք 155

4. Եվրոպա 57

34. Աշխարհագրական դիրքը 159
35. Իսլանդիայի գեյզերները և Եվրոպայի ռելիեֆը 164
36. Ալպեր 168
37. Գոլֆստրիմ/Հյուսիսատլանտյան հոսանք 173
38. Դանուբ՝ Եվրոպայի մայր գետը 177
39. Միջերկրածովյան մերձարևադարձային անտառներ 181
40. Բնապահպանական խնդիրներ 184
41. Մարդածին լանդշաֆտ 189
42. «Ծեր» Եվրոպան 195
43. Արդյունաբերական հեղափոխությունը և ժամանակակից Եվրոպան 199
44. Եվրամիություն 204
Ամփոփիչ համալիր առաջադրանք 207

5. Կովկաս 9

45. Կովկասի աշխարհագրական դիրքը և ռելիեֆը 211
46. Սպիտակի երկրաշարժը 216
47. Սև և Կասպից ծովերը 221
48. Ապշերոնյան թերակղզի (նավթ) 227
49. Մեծ Կովկաս՝ կլիմայի գլխավոր բաժանարար 232
50. Գետահովտային անտառներ 236
51. Էթնիկ բազմազանություն 240
52. Կուբան՝ Ռուսաստանի «շտեմարան» 245
Ամփոփիչ համալիր առաջադրանք 249

Հավելված 251

Հարավային Ամերիկա

Այստեղ կտեղեկանաս, որ. ...

- Անդյան լեռները աշխարհի ամենաերկար լեռնային համակարգն է:
- Ամազոնն աշխարհի ամենաջրառատ գետն է:
- Հարավային Ամերիկայում է գտնվում ամենաչոր անապատը՝ Ատակաման:
- Հարավային Ամերիկայում տափաստանները կոչվում են պամպաներ:
- Հարավային Ամերիկային բնորոշ արևադարձային անտառները (հիլեաներ) կոչվում են «երկրագնդի թոքեր»:
- Հարավային Ամերիկան աշխարհում առանձնանում է կենսաբազմազանությամբ:
- Հարավային Ամերիկայում ինտենսիվորեն իրականացվում են անտառահատումներ:
- Հարավային Ամերիկայում առավելապես տարածված են իսպաներենն ու պորտուգալերենը:
- Հարավային Ամերիկան բնութագրվում է էթնիկ բազմազանությամբ:

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարածքը՝ 17,8 մլն կմ²

Բնակչությունը՝ 432 միլիոն մարդ (2020 թ.)

Բարձրագույն գագաթը՝ Ակոնկագուա, Արգենտինա, 6960 մ

Ամենացածր վայրերը՝ Վալդես, Արգենտինա, ծ.մ. 40 մ ցածր

Ամենաերկար գետը՝ Ամազոն, 6440 կմ

Ամենամեծ լիճը՝ Մարակաիբո, Վենեսուելա, 13201 կմ²

Ամենաբարձր ջրվեժը՝ Անխել, Չուրուն գետի վրա, Վենեսուելա, 979 մ

Ամենամեծ անապատը՝ Պատագոնիա, Արգենտինա, 673 000 կմ²

Ամենամեծ կղզին՝ Հրո Երկիր, 48692 կմ²

Ամենամեծ պետությունը՝ Բրազիլիա, 8547400 կմ²

Ամենափոքր պետությունը՝ Սուրինամ, 163821 կմ²

Ամենամեծ քաղաքը՝ Սան Պաուլո, Բրազիլիա, 22 միլիոն մարդ (2020 թ.)

Եթե ցանկանում ես ավելին իմանալ Հարավային Ամերիկայի մասին, այցելի՛ր
https://www.worldatlas.com/continents/south-america.html

1. Աշխարհագրական դիրքը



1.1. Հարավային Ամերիկայի ֆիզիկական քարտեզ (Հավելված 3)

Զրարգելակ, շլյուզ

Սահանափակ

Հիշի՛ր

1. Ինչպե՞ս էր կոչվում Հարավային կիսագնդում գտնվող հնագույն սուպերմայրցամաքը, և ո՞ր մայրցամաքներն են առաջացել նրա փլուզման արդյունքում:
2. Երբ Հարավային Ամերիկայում ցերեկ է, մեզ մոտ՝ Արևելյան կիսագնդում, գիշեր է և հակառակը: Բացատրի՛ր, թե ինչու է այդպես լինում:
3. Որտե՞ղ է գտնվում և ինչո՞վ է հայտնի Դրեյքի նեղուցը:
4. Հաշվի առնելով Հարավային Ամերիկայի աշխարհագրական դիրքը՝ ենթադրություն արտահայտի՛ր մայրցամաքի բնության մասին:

Արևմտյան կիսագնդում՝ արկտիկական գոտուց մինչև գրեթե ենթաարկտիկական գոտի ձգվում է ընդարձակ ցամաք, որը կոչվում է Ամերիկա: Այն բնական պայմանների և լանդշաֆտների բնույթով միավորում է կտրուկ տարբեր երկու մայրցամաքներ՝ **Հյուսիսային և Հարավային Ամերիկան:**

Հարավային Ամերիկան հատկացնում են հարավային մայրցամաքներին, և մայրցամաքներից մեծությամբ չորրորդն է: Այն ուրվագծով նման է հսկայական եռանկյունու, որը հիմքով ուղղված է դեպի հյուսիս, իսկ գագաթով՝ դեպի հարավ:

Մայրցամաքն ամենալայնը հս.լ. 5^0-ի վրա է և ձգվում է հյուսիսից հարավ 7640 կմ-ի, իսկ արևմուտքից արևելք՝ 4990 կմ-ի վրա:

Առաջադրանք

1. Հարավային Ամերիկայի ֆիզիկական (նկ. 1.1, Հավելված 3) և կիսագնդերի (Հավելված 1) քարտեզների օգնությամբ՝ որոշի՛ր.
   - **ա.** Ո՞ր կիսագնդերում է գտնվում մայրցամաքը, և ի՞նչ դիրք ունի մայրցամաքը արևադարձների և սկզբնական միջօրեականի նկատմամբ:
   - **բ.** Ո՞ր կողմից ո՞ր օվկիանոսներն են սահմանակցում:
   - **գ.** Ո՞ր օվկիանոսի ավազանին է պատկանում Կարիբյան ծովը:
   - **դ.** Ո՞ր օվկիանոսային հոսանքներն են անցնում մայրցամաքի ափերի մոտ, արտահայտի՛ր ենթադրություն, թե դրանք ինչ ազդեցություն են թողնում նրա բնության վրա:
2. Օգտվելով Հարավային Ամերիկայի ֆիզիկական քարտեզից (նկ. 1.1, Հավելված 3)՝ որոշի՛ր Հարավային Ամերիկա մայրցամաքի ծայրակետերի աշխարհագրական կոորդինատները՝ հյուսիսում՝ Պունտա-Գալինաս, հարավում՝ Ֆրոուերդ, արևելքում՝ Կաբո-Բրանկու և արևմուտքում՝ Պարինյաս:

Մայրցամաքը Հյուսիսային Ամերիկայից անջատված է Պանամայի նեղ պարանոցով և դրա վրա անցկացված Պանամայի ջրանցքով, իսկ Անտարկտիդայից՝ Դրեյքի նեղուցով:

1.2.

XVI դարում Պանամայի պարանոցը հայտնաբերելուց հետո, ջրանցքի կառուցման գաղափար բազմիցս է առաջացել, սակայն, այս գաղափարը միայն XIX դարի 80-ական թվականներին է իրականացրել ֆրանսիական մի ընկերություն, որի գլուխ էր կանգնած Սուեզի ջրանցքի շինարար Ֆերդինանդ Լեսեպսը: 10 տարի անց ընկերությունը սնանկացավ, և ջրանցքի շինարարությունը միայն 1904-1914 թվականներին կարողացավ շարունակել ԱՄՆ-ն:

① Շլյուզ

Առաջադրանք

3. Բացի Սուեզի ջրանցքից, ուրիշ ի՞նչ կարևոր ջրանցք գիտես, և բացատրի՛ր, թե ի՞նչ կարևորություն ուներ այս ջրանցքների կառուցումը:

Հարավային Ամերիկայի ափի երկարությունը 26 000 կմ է: Առափնյա գիծը թույլ մասնատված է և պիտանի չէ նավահանգիստներ կազմակերպելու համար: Հարակից կղզիների ընդհանուր մակերեսով մայրցամաքը գերազանցում է միայն Ավստրալիային և Անտարկտիդային: Չափսերով առանձնանում են Տրինիդադ, Գալապագոս և Ֆոլքլենդյան կղզիները, Հրո երկիր և Չիլի արշիպելագները:

1.3.

1520 թվականին Ֆերնանդո Մագելանը, այն նեղուցը հատելիս, որն այսօր նրա անունն է կրում, ափին կրակ է տեսել: Ճանապարհորդն այս երկիրն անվանել է «Տյերրա դել Ֆուեգո» կամ Հրո երկիր: Հրո երկիր կղզեխումբը հաճախ կոչում են նաև «աշխարհի վերջ», «աշխարհի վերջի երկիր»:

Առաջադրանք

4. Օգտագործելով կիսագնդերի քարտեզը (Հավելված 1)՝ համեմատի՛ր Հարավային Ամերիկայի և Աֆրիկայի աշխարհագրական դիրքը և որոշի՛ր, թե ինչ նմանություններ ու տարբերություններ կան նրանց միջև: Տեղեկությունները ներկայացրո՛ւ սխեմայի տեսքով:

Աշխարհագրական հետազոտություն

Օգտվելով Հարավային Ամերիկայի ֆիզիկական (նկ. 1.1, Հավելված 3) և կիսագնդերի քարտեզներից (Հավելված 1)՝ երևակայությամբ ճանապարհորդի՛ր մայրցամաքի ափամերձ գծի երկայնքով.

ա. Նկարագրի՛ր ափամերձ գիծը և եզրակացությո՛ւն արա դրա բնույթի մասին:

բ. Համեմատի՛ր Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի և Ավստրալիայի ափամերձ գծերը և որոշի՛ր, թե ինչ նմանություններ ու տարբերություններ կան դրանց միջև:

Գործնական աշխատանք

Հարավային Ամերիկայի ուրվագծային քարտեզի վրա նշի՛ր և գրի՛ր մայրցամաքի ծայրահեղ կետերի, սահմանակից օվկիանոսների և ծովերի, ծովածոցերի, նեղուցների և հարակից կղզիների անվանումները:

Օգտվելով http://mapmaker.nationalgeography.org/ կայքից՝ ստեղծի՛ր

Հարավային Ամերիկայի էլեկտրոնային ֆիզիկական քարտեզ: Ընտրի՛ր քեզ համար հետաքրքիր երեք օբյեկտ, դրանց մասին տեղեկություններ գտի՛ր և քարտեզին կցի՛ր համառոտ տեքստի, լուսանկարի և/կամ տեսանյութի տեսքով:

Սա հետաքրքիր է

- Պանամայի ջրանցքի տեխնիկական պարամետրերն են. երկարությունը՝ 82 կմ, լայնությունը՝ 150-305 մ, խորությունը՝ 18 մ, նավարկելիությունը՝ օրական 48 նավ, ջրանցքով անցնելու ժամանակը՝ 18 ժամ:
- Հրո երկրի կղզիների գլխավոր քաղաք Ուշուայան համարվում է աշխարհի ամենահարավային քաղաքը: Քաղաքում կա նավահանգիստ, որտեղ կանգ են առնում դեպի Անտարկտիդա ուղևորվող զբոսանավերը: Ուշուայան գտնվում է աշխարհի ամենից հարավում և Անտարկտիդայի դարպասն է: Ուշուայա նշանակում է «արևմուտք թափանցած ծոց»: Քաղաքում ապրում է ընդամենը 63 280 մարդ, որոնց հիմնական գործունեությունը ձկնորսությունն է, նավթի և գազի արդյունահանումը, ոչխարաբուծությունը և էկոտուրիզմը:
- Զատկի կղզին, նույն Ռապանույը, հրաբխային ծագում ունեցող կղզի է Խաղաղ օվկիանոսի արևելյան մասում և 1888 թվականից պատկանում է Չիլիին: Կղզու տարածքը 165,5 կմ^2 է, բարձրագույն կետի բարձրությունը՝ մոտավորապես 539 մ: Կղզում կան բազմաթիվ հանգած հրաբուխներ: Կլիման խոնավ-արևադարձային է՝ տեղումների տարեկան միջին ցուցանիշը հասնում է 1300 մմ-ի: Այստեղ հիմնականում թփուտներ և խոտ է աճում:

Զատկի կղզին հայտնի է իր քարե հսկայական քանդակներով ու հիերոգլիֆային գրով: Կղզում ստեղծված Ռապանուի ազգային պարկը 1983 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ն ներառել է համաշխարհային ժառանգություն ցանկում: Զատկի կղզին համարվում է աշխարհի ամենահեռավոր բնակեցված կղզին:

2. Կոնկիստադորներ

Կոնկիստադոր

Իսպանացի և պորտուգալացի զինվորներ, աղքատ ազնվականներ, արկածախնդիրներ, որոնք Կոլումբոսի կողմից Ամերիկան հայտնաբերելուց հետո ժամանակակից Ամերիկա մայրցամաքը իսպանացիների գերիշխանության մեջ ընդգրկեցին:

Հիշի՛ր

1. Ո՞ր ժամանակաշրջանն է կոչվում Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջան և ինչո՞ւ:
2. Ի՞նչ նախադրյալներ հանգեցրին Աշխարհագրական մեծ հայտնագործություններին:

Առաջին եվրոպացիները, ովքեր տեսան Հարավային Ամերիկայի ափերը, Քրիստոֆեր Կոլումբոսի երրորդ արշավախմբի անդամներն էին, սակայն, ինքը՝ Կոլումբոսը, ոչ էլ կռահեց, որ նոր մայրցամաք է հայտնագործել:

Քրիստոֆեր Կոլումբոսի արշավախումբը 1492 թվականին դուրս եկավ իսպանական Պալոս նավահանգստից և մի քանի ամիս նավարկելուց հետո հասավ Կենտրոնական Ամերիկայում գտնվող Բահամյան կղզիներ: Կոլումբոսն այս կղզիները համարեց Հնդկաստանի հող, որը եվրոպացիները հետագայում անվանեցին «Վեստ Ինդիա» կամ Արևմտյան Հնդկաստան: Այստեղից էլ մնացել է այս տարածաշրջանի անվանումը, իսկ տեղացիների՝ «հնդկացիներ» անվանումը: Այսօր «հնդկացիներ» բառի փոխարեն օգտագործվում է «բնիկ» տերմինը:

Չնայած նրան, որ մայրցամաքը հայտնաբերել է Կոլումբոսը, այն կրում է իտալացի ճանապարհորդ Ամերիգո Վեսպուչիի անունը: Վեսպուչին առևտրի նպատակով 1499-1502 թվականներին մի քանի անգամ ճանապարհորդել է Ամերիկայում և առաջինն է, ով կռահել է, որ Կոլումբոսի հայտնաբերած երկիրը Հնդկաստանը չէր, այլ բոլորովին նոր, նախկինում անհայտ մայրցամաք էր: Այս տարածքները կոչեցին նախ՝ «Նոր աշխարհ», այնուհետև՝ «Ամերիգոյի հողեր»: Հետագայում այս անունով կոչվեց Հյուսիսային և Հարավային Ամերիկա ամբողջ մայրցամաքը:

XVI դարում Իսպանիայից և Պորտուգալիայից դեպի նոր, հարուստ մայրցամաք շարժվեցին աղքատ վաճառականներ ու ոսկի որոնողներ, որոնք կոչվեցին **կոնկիստադորներ:** Նրանք Ամերիկա էին ուղևորվում հողեր նվաճելու, բնակչությանը կողոպտելու, ոսկի ու գոհարեղեն հայթայթելու համար:

Կոնկիստադորներն Ամերիկայում նվաճեցին այն ժամանակվա համար շատ հզոր երկիր՝ Ացտեկների կայսրությունը, և այն վերածեցին իսպանական գաղութի, իսկ տեղի բնակչությունը և նրա մշակույթը գրեթե ամբողջությամբ ոչնչացրին: Հետագայում նրանք գրավեցին Հարավային Ամերիկայի երկրորդ ամենահզոր պետությունը՝ Ինկերի կայսրությունը: Ոսկի և իշխանություն ձեռք բերելու համար կոնկիստադորներն անխնա ոչնչացնում էին ոչ միայն բնիկ բնակչությանը, այլ նաև՝ միմյանց: Հարավային Ամերիկան վերածվեց Իսպանիայի և Պորտուգալիայի գաղութային տերության: Ափամերձ և հողագործության համար պիտանի տարածքները զբաղեցրին Եվրոպայից վերաբնակվածները, իսկ տեղի բնակչությանը հալածում էին դեպի մայրցամաքի ներքին և լեռնային շրջաններ:

2.1.

Ֆրանցիսկո Պիսառռո Գոնսալեսը իսպանացի ավանտյուրիստ և կոնկիստադոր է, որը, նոր աշխարհի հեքիաթային հարստության մասին տարածված պատմություններով հրապուրված, 1502 թվականին ուղևորվեց Հարավային Ամերիկա: 1535 թվականին նա զավթեց Ինկերի կայսրությունը և հիմնեց քաղաք Լիման:

Դեպքի վերլուծություն

Ծանոթացի՛ր տեղեկություններին Ինկերի կայսրության մասին և պատասխանի՛ր հարցերին.

Ինկերի կայսրությունը գտնվում էր Անդյան լեռներում և առանձնանում էր լավ զարգացած տնտեսությամբ և հնագույն մշակույթով: Կայսրությունը շատ հարուստ էր ոսկու-արծաթի և պղնձի հանքաքարերով: Տեղի բնակչությունը մշակում էր այս մետաղները և տարբեր իրեր պատրաստում: Ինկերի կայսրության մայրաքաղաքը Մաչու Պիկչուն էր:

Ինկերը դարերի ընթացքում բազմաթիվ ճանապարհներ են անցկացրել Հարավային Ամերիկայում, Անդյան լեռներում և դրա համար նույնիսկ կառուցել են կախովի կամուրջներ: Ճանապարհների շինարարությունը դադարեց XVI դարում՝ իսպանացի զավթիչների գալուց հետո: Կար 4 հիմնական ճանապարհ, որոնցից ամենաերկարը հասնում էր 6600 կմ-ի, և միացնում էր կայսրության բոլոր քաղաքները:

Հարցեր.

ա. Ինչ ես կարծում, ինչո՞ւ է Հարավային Ամերիկայում նախակոլումբոսյան դարաշրջանի քաղաքակրթությունների մեծ մասն առաջացել Անդյան լեռներում:

բ. Օգտվելով նկ.1.1-ից (Հավելված 3)՝ դատողությո՛ւն արա, թե ինչ բնական պայմաններում էին ապրում տեղացիները Անդյան լեռներում և Ամազոնի անտառներում:

գ. Ըստ քարտեզի՝ նկարագրի՛ր, թե որ քաղաքներն էին միմյանց հետ կապում գլխավոր ճանապարհները, և բացատրի՛ր, թե ինչ նպատակ կունենային երկրորդական ճանապարհները:

դ. Իսպանացիներն ինչո՞ւ ոչնչացրին տեղի ցեղերին:

ե. Ինչո՞ւ ոչնչացվեցին Կենտրոնական և Հարավային Ամերիկայի բարձր զարգացած քաղաքակրթությունները:

զ. Ինչո՞ւ տեղի բնակիչները չկարողացան զավթիչներին դիմադրություն ցուցաբերել:

Այս շրջանի գաղութային նվաճումների հետ Հարավային Ամերիկա մայրցամաքում շատ աշխարհագրական հայտնագործություններ են կապված: 1541-1542 թվականներին իսպանացի կոնկիստադոր և ճանապարհորդ

Ֆրանցիսկո դե Օրելյանն իր ջոկատով եվրոպացիներից առաջինն է հատել մայրցամաքի ամենալայն մասը՝ հաղթահարել է Անդյան լեռները, իջել Ամազոն գետի երկայնքով և հասել Ատլանտյան օվկիանոս:

2.2.

Ֆրանսիսկո Պիսառոյի և Ֆրանցիսկո դե Օրելյանի ճանապարհորդությունների երթուղիները

Առաջադրանք

1. Ըստ նկ. 2.2-ի և Հարավային Ամերիկայի քաղաքական քարտեզի (նկ. 10.3, Հավելված 4)՝

ա. Որոշի՛ր, թե մայրցամաքի որ ափերն են հայտնագործել իսպանացիները և որը՝ պորտուգալացիները:

բ. Պարզի՛ր, թե ժամանակակից որ երկրներն են գտնվում այս տարածքներում:

Հարավային Ամերիկայի բնությունը գրեթե 300 տարվա ընթացքում չէին կարող ուսումնասիրել: Իսպանացի և պորտուգալացի գաղութարարները փորձում էին իրենց տիրույթներ ներս չթողնել հետազոտողների և գիտնականների: Չնայած դրան՝ XIX դարի երկրորդ կեսին արդեն որոշված էր մայրցամաքի առափնյա գծի ամբողջական ուրվագիծը:

XX դարում ակտիվացավ Ամազոնի հարթավայրի ուսումնասիրությունը, որին մասնակցում էին տարբեր երկրների գիտնականներ:

Հարավային Ամերիկայի բնության ուսումնասիրության գործում հատուկ ներդրում է կատարել գերմանացի աշխարհագրագետ և ճանապարհորդ Ալեքսանդր Հումբոլդտը: XVIII- XIX դարերի սահմանագծին նա մայրցամաքն

ուսումնասիրելու համար ֆրանսիացի բուսաբան Էմմե Բոնպլանի հետ կազմակերպեց արշավախումբ: Հումբոլդտն ուսումնասիրեց մայրցամաքի ռելիեֆը, բուսական ծածկույթը, հավաքեց բուսաբանական և կենդանաբանական հավաքածուներ, նկարագրեց արևմտյան ափի մոտ անցնող հոսանքը և բացատրեց դրա կարևորությունը ափամերձ շրջանների կլիմայի ձևավորման գործընթացում:

Նա հետազոտել է նաև Անդյան լեռները և առաջ քաշել ուղղաձիգ կամ վերընթաց զոնայականության գաղափարը. Հումբոլդտի դիտարկմամբ, լեռներում բնական զոնաները փոխվում էին բարձրության ավելացման հետ:

Հարավային Ամերիկա Ա.Հումբոլդտի և Է.Բոնպլանի ճանապարհորդության երթուղին

2.3.

Հումբոլդտը ճամփորդության արդյունքում պարզեց, որ Ամազոնի և Օրինոկոյի գետային համակարգերը կապվում են իրար հետ: Ինչպես նաև, որոշեց որոշ լեռնաշղթաների ուղղությունները, քարտեզի վրա նշեց մայրցամաքի արևմտյան ափերի մոտ անցնող հոսանքը, որը կոչվեց Հումբոլդտի հոսանք:

Առաջադրանք

2. Ըստ նկ.2.3-ի՝ նկարագրի՛ր Ա. Հումբոլդտի և Է.Բոնպլանի ճանապարհորդության երթուղին: Ինչ ես կարծում, նրանք ի՞նչ դժվարություններ հարկադրված կլինեին հաղթահարել ճանապարհորդելիս:
3. Ժամանակակիցները Ա.Հումբոլդտին անվանում են «XIX դարի Արիստոտել», իսկ նրա արշավախումբը Հարավային Ամերիկա՝ «Ամերիկայի երկրորդ հայտնագործում»: Ինչ ես կարծում, ինչո՞ւ:
4. Քո կարծիքով՝ ժամանակակից դարաշրջանում կա՞ արդյոք Հարավային Ամերիկա գիտա-հետազոտական արշավախումբ կազմակերպելու անհրաժեշտություն: Պատասխանը հիմնավորի՛ր:
5. Հարավային Ամերիկայի ճանապարհորդներին և գիտնականներին տեղակայի՛ր ժամանակային գծի վրա, դրանցից յուրաքանչյուրին կցի՛ր ուղևորության ամսաթիվը և արդյունքը: Դատողությո՛ւն արա այս ճանապարհորդների ու հետազոտողների «լավ» ու «վատ» վաստակի մասին և արտահայտի՛ր կարծիք այն մասին, թե ինչ կփոխեիր ճանապարհորդության ընթացքում, եթե դու որևէ արշավախմբի անդամ լինեիր:

Համալիր առաջադրանք

Նպատակային հասկացություն.

Աշխարհագրական հետազոտություն և վերլուծություն, աշխարհագրական երևույթ, աշխարհագրական գործընթաց, բնակչությունը և տնտեսությունը:

Հարցը. Կոնկիստադորներ

Պատկերացրո՛ւ, որ աշխատում ես հրատարակչությունում՝ որպես նկարիչ-նկարազարդող, և խմբագիրը քեզ հանձնարարել է աշակերտների համար ստեղծել ծաղրաշար: Ստեղծի՛ր ծաղրաշար «Նախակոլումբոսյան քաղաքակրթություններն ու կոնկիստադորները Ամերիկայում» թեմայով:

Ծաղրաշարում հստակ ցո՛ւյց տուր.

- Կոնկիստադորների դերն ու ազդեցությունը Հարավային Ամերիկայի բնակչության վրա:
- Ճանապարհորդների և հետազոտողների հայտնագործությունների հետևանքներն ու կարևորությունը մայրցամաքի յուրացման/զարգացման գործընթացում:

Գործնական խորհուրդներ.

- Ծանոթացի՛ր Հարավային Ամերիկայի նախակոլումբոսյան քաղաքակրթություններին:
- Ուրվագծային քարտեզի վրա նշի՛ր Հարավային Ամերիկայի նախակոլումբոսյան քաղաքակրթությունների բնակեցման տարածքները:
- Դատողությո՛ւն արա, թե ինչպես և ինչու էին նվաճում իսպանացի ու պորտուգալացի կոնկիստադորները Հարավային Ամերիկան:
- Գնահատի՛ր կոնկիստադորների, ճանապարհորդների և հետազոտողների հայտնագործությունների հետևանքով տեղի ունեցած փոփոխությունների ուժեղ և թույլ կողմերը:

  Ծաղրաշարը ստեղծելու համար կարող ես օգտագործել ինչպես լուսանկարչական նյութ, այնպես էլ քո կողմից ստեղծված նկարներ: Ծաղրաշարը ներկայացնելիս ցո՛ւյց տուր, թե հետազոտության ինչ փուլեր ես անցել առաջադրանքի պատրաստման ընթացքում:

Գործնական աշխատանք

Աշխարհի ֆիզիկական ուրվագծային քարտեզի վրա քո կողմից ստեղծված պայմանական նշաններով նշի՛ր Քր.Կոլումբոսի, Ա. Վեսպուչիի, Ֆ. Պիսառոյի, Ֆ.Օրելյանի և Ա.Հումբոլդտի ճանապարհորդությունների երթուղիները:

Սա հետաքրքիր է

- 1494 թվականին Տորդեսիլյասում (Իսպանիա) Հռոմի պապ Ալեքսանդր VI-ի նախաձեռնությամբ Իսպանիայի և Պորտուգալիայի միջև կնքվեց Տորդեսիլյասի պայմանագիրը: Դրա հիման վրա բաժանարար գիծը սահմանվեց արմ.ե 46^0-ի վրա, որից դեպի արևմուտք գտնվող բոլոր տարածքները հայտարարվեցին Իսպանիայի սեփականություն, իսկ գծի արևելքում հայտնագործված նոր հողերը՝ Պորտուգալիայի տիրույթներ:
- Հայտնի ամերիկացի ալպինիստուհի Էննի Սմիթ Պեկը ծնվել է 1850 թվականին Պրովիդենսում: Նա առաջիններից մեկն էր, ով նվաճեց Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, ինչպես նաև Եվրոպայի գրեթե բոլոր գագաթները: 58 տարեկան Էննի Սմիթը նվաճեց Անդյան լեռների Հուասկարան գագաթը (6656 մ), իսկ 61 տարեկանում՝ Կորոպունա (6377 մ) բարձրացավ: Վերջին գագաթն Էնին 82 տարեկանում նվաճեց: Իր ճանապարհորդությունների տպավորությունները նա ունկնդիրներին պատմում էր դասախոսությունների ժամանակ, նաև նկարագրել է իր գրքերում:

3. Անդյան լեռներ

Հիշի՛ր

1. Ի՞նչ է քարոլորտի սալը, և քարոլորտի ո՞ր սալի վրա է գտնվում Հարավային Ամերիկան:
2. Ինչո՞ւ են մեծ և բարձր լեռնաշղթաները հանդիպում հիմնականում մայրցամաքների ծայրամասերում:

Առաջադրանք

1. Ըստ հարավային Ամերիկայի ֆիզիկական քարտեզի (նկ. 1.1, Հավելված 3)՝ բացատրի՛ր, թե ի՞նչ առանձնահատկություններով է աչքի ընկնում մայրցամաքի ռելիեֆը:

Հարավային Ամերիկա մայրցամաքի արևելյան մասի հարթ ռելիեֆը պայմանավորված է նրա պլատֆորմային կառուցվածքով: Հարավային Ամերիկայի պլատֆորմը բազմիցս բարձրացել է և տեղ-տեղ դեպի ներքև ճկվել: Պլատֆորմի այս տեղամասերում են գտնվում Ամազոնի, Օրինոկոյի և Լա Պլատայի հարթավայրերը, որոնք զբաղեցնում են մայրցամաքի 45%-ը:

Բրազիլական և Գվիանական սարահարթերը պլատֆորմի ելուստներն են, որոնք առաջացել են նրա բարձրացման արդյունքում: Գվիանական սարահարթը ամենամեծ բարձրության է հասնում կենտրոնական մասում, իսկ Բրազիլական սարահարթը՝ հարավ-արևելքում:

Գվիանական սարահարթում բազմաթիվ սեղանաձև լեռներ կան՝ այսպես կոչված **Տեպուի:** Տեպուին ամբողջությամբ մեկուսացված է անտառային տարածքներից, ինչի պատճառով էլ դրանք հանդես են գալիս որպես «էկոլոգիական կղզիներ»: Լեռների մեկուսացումը պայմանավորել է տեղական բուսական և կենդանական աշխարհի զարգացում: Տեպուիի վրա աճում է մեծ քանակությամբ եզակի էնդեմիկ բուսականություն, իսկ կենդանական աշխարհի որոշ ներկայացուցիչներ միայն այստեղ են տարածված:



3.1. Տեպուին գտնվում է Ռորայմա Կանայամա ազգային ազգային պարկի հարավ-արևելյան մասում: Այս սեղանաձև լեռան բարձրությունը 2810 մետր է: Ռորայամայի գլխին մշտապես ամպամած է: Նրա գագաթը սարահարթ է, որի տարածքը կազմում է մոտավորապես 34 կմ²:



Մայրցամաքի արևմուտքում գտնվող **Անդյան լեռները** երիտասարդ ծալքավոր լեռներ են: Լեռները սկսել են ձևավորվել դեռևս այն ժամանակ, երբ այն Գոնդվանայի մի մասն էր կազմում և զարգացման երկար երկրաբանական ուղի է անցել: Անդերը աշխարհում ամենաերկար (մոտավորապես 9000 կմ-ի վրա ձգվող) և բարձրությամբ երկրորդ լեռնային համակարգն է: **Ակոնկագուա** գագաթը (6960 մ) բարձրությամբ ոչ միայն Անդերի և Հարավային Ամերիկայի, այլ նաև ամբողջ Արևմտյան կիսագնդի ամենաբարձր գագաթն է:

Անդյան լեռները համարվում են աշխարհի ամենամեծ ջրբաժան համակարգը:

Անդերում, ըստ կառուցվածքի, առանձնացնում են երկու՝ արևելյան և արևմտյան, գոտիներ: Արևելյան Անդերը հիմնականում բաղկացած է միջօրեական ուղղության փոխադարձաբար զուգահեռ լեռներից, որոնց միջև զարգացած են սարահարթեր ու իջվածքներ:

3.2. Անդյան լեռներ

Պղնձի հանքաքար
Անագի հանքաքար
Լեռնաշղթաների ուղղությունը
Հրաբուխներ
Գագաթի բարձրությունը 4058

Եթե ցանկանում ես ավելին իմանալ Անդյան լեռների մասին, այցելի՛ր կայքէջ

https://www.britannica.com/place/Andes-Mountains

Անդերում մոտավորապես 70 ակտիվ և հանգած հրաբուխ կա: Այստեղ է գտնվում աշխարհի ամենաբարձր Օխոս-դել-Սալադո հրաբուխը (6893 մ):

3.3. Օխոս-դել-Սալադո հրաբուխը Հարավային Ամերիկայում բարձրությամբ զիջում է միայն Ակոնկագուային: Այն գտնվում է Արգենտինայի և Չիլիի սահմանին և միևնույն ժամանակ Չիլիի ամենաբարձր գագաթն է: Հրաբխից արևմուտք՝ մինչև Խաղաղ օվկիանոս, ձգված է Ատակամա անապատը: